

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Համառոտ նկարագիր



ՏԱՐԱԾՔԸ (ՀՀ տարածքի 15.1%-ը)	4506 քառ.կմ
ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ	153.0 հազար մարդ
որից քաղաքային	103.8 հազար մարդ
գյուղական	49.2 հազար մարդ
ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ	34 մարդ/կմ.ք.
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԹԻՎԸ	109
որից քաղաքային	7
գյուղական	102
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԹԻՎԸ	135
որից սահմանամերձ, լեռնային եւ բարձր լեռնային	105
ՍԱՀՄԱՆԻ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ	472 կմ
Իրանի Իսլամական Հանրապետության հետ	42 կմ
Ադրբեջանի Հանրապետության հետ	382 կմ
(որից 110 կմ-ը Նախիջևանի ԻՀ հետ)	
ՄԱՐԶԿԵՆՏՐՈՆԸ	ք. Կապան

Մարզպետարանի գործունեության կազմակերպման ընդհանուր հարցեր

Պետական կառավարումը մարզում տարվել է կառավարության տարածքային քաղաքականության իրականացման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման միջոցով:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետի 2006թ. աշխատանքային ծրագրի համաձայն մարզի սոցիալ-տնտեսական գործունեության հիմնական ուղղություններն էին՝

- Միջազգային և դոնոր կազմակերպությունների, հիմնադրամների հետ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացում և նրանց կողմից նպատակային ծրագրերի իրականացման օժանդակումը.
- Արտադրական հզորությունների վերագործարկման և նորերի շահագործման խնդրի օժանդակումը՝ առաջնահերթությունը տալով տեղական հումք վերամշակող և սննդի արտադրության ձեռնարկություններին:

- Նոր աշխատատեղերի ստեղծման միջոցով աղքատության մակարդակի իջեցումը.
- Փոքր և միջին ձեռներեցության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծման աջակցումը.
- Համայնքային բյուջեների հավաքագրմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը.
- Տոհմային գործի բարելավում, հացահատիկային մշակաբույսերի սորտափորձարկման նոր կայանի և տնկարկային տնտեսության ստեղծումը.
- Գյուղացիական տնտեսություններին վարկերի հատկացման և ապահովագրական գործի ներդրման աջակցումը.
- Քաղաքային և գյուղական համայնքների քաղաքաշինական գլխավոր փաստաթղթերի կազմման աշխատանքների կազմակերպումը.
- Քաղաքային համայնքներում խմելու ջրատարների և ջրամատակարարման ներքին ցանցերի հիմնանորոգում և կառուցումը.
- Կրթական համակարգի բարեփոխումների ծրագրի իրականացումը.
- Հանրակրթական դպրոցների, մշակութային օջախների և սպորտային կառույցների վերանորոգում, գույքի և սարքավորումների ձեռքբերումը.
- Ավտոճանապարհների պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության ապահովումը.
- Ներմարզային երթուղիներով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների գործունեության կանոնակարգում և բարելավումը.
- Կապի ծառայությունների սպասարկման որակի բարելավման օժանդակում:
- Առողջապահության բնագավառում պետական նպատակային առողջապահական ծրագրերի իրականացում, բնակչության բժշկական օգնության և սպասարկման աշխատանքների բարելավումը.
- Աղքատության նպաստի համակարգում ընդգրկված ընտանիքների ցուցակների ճշգրտում, հատկացված միջոցների առավել հասցեական օգտագործումը.
- Փախստականների ընտանիքներին բնակարաններով ապահովման խնդրի լուծումը.
- «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրերի շրջանակներում իրականացվող աշխատանքների կազմակերպումը.
- Հողօգտագործման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենսդրության պահանջների կատարման օժանդակումը.
- Գույքային իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքների աջակցումը.

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետի կողմից հրավիրվել է մարզխորհրդի 4 նիստ, անցկացվել 27 խորհրդակցություն համայնքների, հանրապետական գործադիր մարմինների, մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարների հետ:

Մարզխորհրդի նիստերի, մարզպետի կողմից անցկացված խորհրդակցությունների քննարկումների արդյունքներում տրվել են համապատասխան հանձնարարականներ, մշակվել և իրականացվել անհրաժեշտ միջոցառումներ, առանձին հարցերի ու խնդիրների լուծման համար առաջարկություններ ներկայացվել՝ ՀՀ կառավարություն, առանձին նախարարություններ և գերատեսչություններ:

Յուրաքանչյուր երկուշաբթի մարզպետի մոտ անց է կացվել գործակարգավորական բնույթի օպերատիվ խորհրդակցություն:

Ամենօրյա ուշադրության կենտրոնում են եղել ՀՀ օրենսդրության պահանջների կատարման ապահովման ուղղությամբ մարզում իրականացվող աշխատանքների ընթացքը, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումներով օպերատիվ լուծում պահանջող հարցերը:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետի կողմից ներկայացվել է ՀՀ կառավարության որոշման 22 նախագիծ, որից 17-ը ընդունվել է: Բացի այդ, մարզպետը ՀՀ կառավարությանը և նախարարություններին է ներկայացրել տարբեր բնույթի շուրջ 132 առաջարկություններ և միջնորդություններ, որոնցից 72-ը լուծում են ստացել, 46-ը ընթացքի մեջ է, 14-ը չի լուծվել՝ կապված ֆինանսական և այլ խնդիրների հետ: Յուրաքանչյուր ամիս ամփոփվում է մարզպետի կողմից ՀՀ վարչապետին, նախարարություններին ներկայացված առաջարկությունների կատարման ընթացքը:

Նկատելիորեն ակտիվացել է միջազգային կառույցների, բարեգործական կազմակերպությունների և հիմնադրամների հետ համագործակցությունը:

Մարզի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման, ինչպես նաև առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման նպատակով, տարվա ընթացքում միջազգային կառույցների, հիմնադրամների և բարեգործական կազմակերպությունների միջոցով իրականացվել են ներդրումային, հումանիտար և վարկային ծրագրեր՝ ավելի քան 5.5 մլրդ. դրամ ընդհանուր արժեքով /հավելված N 2/, ընդգրկելով մարզի գրեթե բոլոր համայնքները:

Մարզի փոքր և միջին բիզնեսի աջակցման նպատակով իրականացվել են ավելի քան 2.5 մլրդ. դրամի վարկային ծրագիր, Հայգյուղփոխօգնության բանկի կողմից 1118, SEF ունիվերսալ վարկային կազմակերպության կողմից 490, UMCOR «Արեգ» վարկային կազմակերպության կողմից 540 մլն. դրամ և այլն:

Շարունակվել են աշխատանքները լեռնահանքային արդյունաբերության ճյուղին օժանդակող հարակից արտադրությունների և ծառայությունների կազմակերպման և զարգացման ուղղությամբ: 2006 թվականին այս ոլորտում արդեն աշխատում են ավելի քան 1000 մարդ:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները որոշակիորեն նպաստել են զբաղվածության մակարդակի բարձրացմանը, բնակչությանը մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնմանը, բարելավել մրցակցային միջավայրը, միջմարզային կոոպերացիայի ստեղծմանը, պետական և տեղական բյուջեների եկամուտների ավելացմանը և այլն:

Սահմանված կարգով և ժամկետներում անց են կացվել քաղծառայողների մեկ երրորդի վերապատրաստումը և ատեստավորումը:

Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:




Ֆինանսական բնագավառ

2006թ. տարվա ընթացքում ՀՀ պետական բյուջեից մարզին հատկացված միջոցների ֆինանսավորումն բոլոր ոլորտներում կատարվել է 100 տոկոսով: հետևյալ պատկերը.

Առողջապահության բնագավառում հիվանդանոցային, ամբուլատոր-պոլիկլինիկական և դիսպանսերային ծրագրերով նախատեսված բազային ծավալը 2006թ. կազմել է 971416.4 հազ. դրամ, առողջապահության գործակալության կողմից ընդունված 955824.1 հազ. դրամ կատարողականը ֆինանսավորվել է ամբողջությամբ, աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 14.7 %,

«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան ՀՀ պետական բյուջեով 2006թ. մարզի 109 համայնքներին նախատեսված 795453.0 հազար դրամ դոտացիաները հատկացվել են ամբողջությամբ:

Համայնքների բյուջեների կատարման ընթացքը ըստ հարկատեսակների հետևյալն է.



Դոտացիաները հիմնականում նպատակաուղղվել են տեղական ինքնակառավարման մարմինների՝ գործող օրեսդրությամբ վերապահված պարտադիր և պատվիրակված լիազորությունների իրականացմանը:

Համայնքների բյուջեները եկամտային մասով կատարվել են 78.7%-ով, իսկ սեփական եկամուտները՝ ապառքներով, 65.2%-ով, նախորդ տարվա 62.2%-ի համեմատ, հաշվարկային ցուցանիշը առանց ապառքների՝ 90.2%: Սեփական եկամուտների բացարձակ աճը նախորդ տարվա համեմատությամբ կազմել է 229586 հազ. դրամ:

Առաջին անգամ 2006թ. մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման գումարը 96 մլն. դրամով գերազանցել է պետբյուջեից հատկացված դոտացիաների գումարին:

Փաստացի հավաքագրված սեփական եկամուտների 891256.2հազ. դրամ ընդհանուր ծավալում հողի հարկի տեսակարար կշիռը կազմում է 14.9%, գույքահարկինը՝ 15.3%, պահուստային ֆոնդի հողերի վարձավճարներինը՝ 12.4%:

2006թ. սահմանված կարգով և ժամկետներում կազմվել և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն են ներկայացվել մարզի 109 համայնքների բյուջեների ամփոփը, 125 պետական ոչ առևտրային կազմակերպությունների պահպանման ծախսերի նախահաշիվները և հաշվարկային ցուցանիշները, 2007թ. բյուջետային ֆինանսավորման հայտերը, 2007-2009թթ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերը:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մարզի տնտեսության առաջնային ճյուղն ավանդաբար եղել և մնում է արդյունաբերությունը: Մարզի արդյունաբերական ձեռնարկությունների ապրանքային արտադրանքի ծավալը 2006 թվականին նախնական տվյալներով (համադրելի գներով) կազմել է 123.0 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ կազմում է 108.0%: Իրացվել է 125.0 մլրդ. դրամի արտադրանք:

Արդյունաբերության առաջատարը լեռնահանքային ճյուղն է, որն ապահովել է մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 86.0%-ը: Պայմանավորված հումքային, տեխնոլոգիական, կադրային ներուժի և իրացման կայուն շուկայի առկայությամբ՝ այս ճյուղը մարզի տնտեսության մեջ դեռ երկար ժամանակ կպահպանի իր առաջնային դերը:

2006 թվականին նախնական տվյալներով մարզում արտադրվել է 1060.0 մլն. կվտ/ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 2005թ. ցուցանիշի 103.8%-ը: Ընդհանուր առմամբ մարզում արտադրված էլեկտրաէներգիայի ծավալը կազմում է հանրապետությունում թողարկված էլեկտրաէներգիայի շուրջ 18.0%-ը, հիդրոէլեկտրակայաններում ստացվածի՝ շուրջ 54.0%-ը:

2006 թվականին մարզում սպառված գազի ծավալը կազմել է 23.1մլն. խոր. մետր կամ 7.0 %-ով ավելի քան նախորդ տարում: Բաժանորդ բնակիչների թիվը կազմել է 15116 (նախորդ տարվա համեմատ 17.0%-ով ավելի), իսկ կազմակերպություններինը՝ 99 (նախորդ տարվա համեմատ 41.4%--ով ավելի): Բնակչության կողմից սպառված գազի տեսակարար կշիռը կազմել է շուրջ 44.2%-ը: Հատկանշանական է, որ 1988 թվականի համեմատ բաժանորդ բնակիչների թիվը ավելացել է 16.3%-ով:

Քաղաքաշինության եւ բնակարանային կոմունալ տնտեսության բնագավառ



2006 թվականի ընթացքում մարզի տարածքում իրականացվել են 2 մլրդ. 128 մլն. 410 հազ. դրամի համաշինարարական աշխատանքներ, որից՝ 353 մլն. 800 հազ. դրամի կապիտալ շինարարության և 1 մլրդ. 774 մլն. 610

հազ. դրամի հիմնանորոգման ու վերանորոգման աշխատանքներ: 2004 թվականի համեմատությամբ մարզում իրականացված համաշինարարական աշխատանքների ծավալը աճել է 47,0 իսկ 2005 թվականի համեմատությամբ 19,2 տոկոսով:

ՀՀ պետբյուջեի միջոցների հաշվին մարզպետարանի կողմից հանրակրթական 6 դպրոցներում /Կապանի թիվ 13, Քարահունջի, Խոտի, Ախլաթյանի, Շաքիի և Ն. Հանդի միջն. դպրոցներ/ իրականացվել են 391 մլն. 330 հազ. դրամի հիմնանորոգման աշխատանքներ:

Որոշակի աշխատանքներ են կատարվել բնակարանային ֆոնդի պահպանման ուղղությամբ: 2006 թվականին, պետական բյուջեով նախատեսված, 55,0 մլն. դրամով նորոգման են ենթարկվել Մեղրի քաղաքի 8, Կապան քաղաքի 12 բազմաբնակարան շենքերի վերելակներն ու 4 դիսպետչերական կետերը:

«Ջրնուղ-կոյուղու ցանցերի շինարարություն» ծրագրով, պետբյուջեից հատկացված 178,0 մլն. դրամ միջոցների հաշվին իրականացվել է «Մեղրի քաղաքի կոյուղու կոլեկտորի կառուցում» և «Մեղրի քաղաքի կոյուղու ներքին ցանցի կառուցում» ծրագրերը:

ՀՀ քաղաքաշինության նախարարության միջոցով ավարտվել է Կապան քաղաքի գլխավոր հատակագծի կազմման աշխատանքները և հաստատվել ՀՀ կառավարության կողմից:

ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից ՀՀ 2006 թվականի պետբյուջեով նախատեսված միջոցների հաշվին հիմնանորոգվել է Գորիսի մարզադպրոցը / 72,23 մլն.դրամ/, Մեղրիի N2 միջնակարգ դպրոցը / 71,26 մլն.դրամ/, ինչպես նաև 139,0 մլն. դրամ գումարով սկսվել է Խոզնավար գյուղի միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքները:

ՀՀ գյուղնախարարության միջոցով / 52,0 մլն. դրամ/ կատարվել է Գորիսի գյուղատնտեսական քոլեջի ուսումնական մասնաշենքի և անասնաբուժական մարզային կենտրոնի /17,7 մլն. դրամ/ հիմնանորոգման աշխատանքները:

ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության միջոցով շարունակվում է մարզի Կահանավանքի վանական համալիրի / 60,0 մլն. դրամ / և սկսվել` Հալիծորի բերդի վերականգնման /50,0 մլն. դրամ/ աշխատանքները:

«Ձանգեզուրի պլանձամուխիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի միջոցներով մարզի 8 համայնքներում իրականացվել է 26 ծրագիր` 665 մլն. 855 հազար դրամ ընդհանուր արժեքով:

Բարեկարգվել են Քաջարան քաղաքի փողոցներն ու բակերը, վերանորոգվել մարզի 12 դպրոցներ, ասֆալտապատվել փողոցներ, գազաֆիկացվել մի շարք թաղամասեր ու բնակելի տներ:

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով մարզում իրականացվել է 3 ծրագիր` կատարվել է Լիճք գյուղի դպրոցի կառուցման` 49,5 մլն. դրամ, շարունակվում է Վարդանիծոր գյուղի` 27,3 մլն. դրամ և սկսվել է Նյուվաղի գյուղի` 8,0 մլն. դրամ դպրոցների կառուցման շինարարական աշխատանքները:

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի» միջոցներով վերականգնվել է մարզի 5 դպրոցների ջեռուցման համակարգերը 101,3 մլն. դրամ ընդհանուր գումարով:

«Կորլոյ Վիժն» կազմակերպության կողմից 2006 թվականին մարզի 29 համայնքում իրականացվել են դպրոցների և մանկապարտեզների, խմելու և ոռոգման ջրագծերի ու կառուցվածքների, հեղեղատարների, առողջապահական հիմնարկների, ակումբների ու կենցաղի տների հիմնանորոգման 48 ծրագիր` 58,9 մլն. դրամ ընդհանուր արժեքով:

2006 թվականին ավարտվել ու շահագործման է հանձնվել ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի

միջոցներով, փախստականների համար, Գորիս քաղաքի 40 բնակարանանոց բնակելի շենքը:

2006 թվականին շարունակվել է մարզի Լեռնաձոր գյուղի փայտյա տներում ապրող բնակիչների բնակարանային պայմանների բարելավման ծրագիրը՝ անցած տարում իրենց բնակարանային պայմաններն են բարելավել ևս 10 ընտանիք:

Որոշակի աջակցություն է ցուցաբերվել կոմունալ ծառայությունների դիմաց վարձավճարների գանձման գործում:

Տրանսպորտի եւ ճանապարհաշինության բնագավառ



Ընդհանուր առմամբ տարբեր ֆինանսավորման աղբյուրներով 2006 թվականի ընթացքում մարզի ճանապարհաշինարարական և այլ կազմակերպությունների կողմից իրականացվել են շուրջ 4,831,49 մլն.դրամի աշխատանքներ:

«Հ պետբյուջեի միջոցներով իրականացվել են տարբեր նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման, պահպանման ու շահագործման, ձմեռային պահպանության համար 4699.69 մլն դրամ ընդհանուր գումարի աշխատանքներ, այդ թվում՝ միջպետական նշանակության ճանապարհների հիմնանորոգման համար՝ 1401.29 մլն. դրամ, հանրապետական նշանակության ճանապարհների հիմնանորոգման համար՝ 2546.2 մլն.դրամ:

Մեղրի-Շվանիձոր-Վերիշեն-Ծավ-Կապան ավտոճանապարհի հիմնանորոգում ծրագրով ավարտվել է Մեղրի-Շվանիձոր 20կմ ճանապարհահատվածի նորոգման ու ասֆալտապատման աշխատանքները:

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից հատկացված միջոցներով Սիսիսան և Գորիս քաղաքներում իրականացվել են 131.8 մլն. դրամի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզի ավտոձեռնարկությունների կողմից ուղևորափոխադրումները կազմել են 521.0 հազար ուղևոր, ուղևորաշրջանառությունը՝ 41920.0 հազար ուղևոր/կմ:

Մարզի քաղաքային և գյուղական համայնքներում «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում իրականացվել է ներհամայնքային ճանապարհների բարեկարգման 47 ծրագիր՝ 49.0 մլն դրամ ընդհանուր գումարով:

Գյուղատնտեսության եւ բնապահպանության բնագավառ



Մարզում գյուղատնտեսությամբ զբաղված է 13345 գյուղացիական տնտեսություն /145-ը՝ ֆերմերային/, որոնց սեփականաշնորհված են 36415հա (ներայալ տնամերձերը), տրված վարձակալությամբ 7300 հա վարելահող:

2006թ. մարզում բերքի տակ է դրվել 27344 հա ցանքային տարածություններ, որից հացահատիկային՝ 19052 հա, հատիկաընդեղային՝ 370 հա և կերային մշակաբույսեր՝ 5215հա, կարտոֆիլ՝ 1822հա, բանջար՝ 885 հա, բազմամյա խոտերի ցանք՝ 4382 հա:

2006թ. արտադրվել է 119704ց հացահատիկ, մեկ հեկտարի միջին բերքը կազմել է 7.1ց., անցյալ տարվա համեմատ պակաս է 8.1ց-ով, (որը արդյունք է երկարատև երաշտի), 3774ց հատիկաընդեղեն (լոբի, ոլոռ), միջին բերքը 10,2 ց.,

273742g կարտոֆիլ, միջին բերքը 150,2g, բանջարաբոստանային կուլտուրաներ (կաղամբ, լոլիկ, վարունգ և այլն)՝ 165133g, միջին բերքը՝ 186,6g:

Պտղատու այգիների վերականգնման նպատակով մարզի տնկարանային տնտեսություններից (Տեղ, Մեղրի) գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին շուկայականից էժան գներով հատկացվել է 22460 հատ պտղատու և դեկորատիվ տնկիներ, հիմնվել է 6 հա նոր պտղատու այգիներ:

Մարզ է ներկրվել և համայնքներին ու ֆերմերային տնտեսություններին շուկայականից էժան գներով տրվել 1930 տոննա ազոտական պարարտանյութ, 400 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմանյութ, 2270կգ թունանյութ՝ մկնանման կրծողների և 1450կգ թունաքիմիկատ՝ մոլախոտների դեմ պայքարի աշխատանքներ կազմակերպման համար, հսկողություն սահմանել դրանց նպատակային օգտագործման նկատմամբ:

2006թ. խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը ավելացել է 405, մանրիները՝ 512 գլխով: Կատարվել է 4140 գլուխ խոշոր եղջերավոր անասունների արհեստական սերմնավորում, որը կազմում է սերմնավորվող անասնագլխաքանակի 9.9 %-ը:

Մարզում էպիզոտիկ վիճակը կայուն է, վարակիչ հիվանդություններ չեն արձանագրվել:

2006թ. մթերվել է 2180 տ. կենդանի քաշով միս, 2800տ. կարտոֆիլ, 1460տ. կաղամբ, 455տ. ձավարեղեն:

2006թ. կատարվել է 12 հա տնկարանային ցանկ, ստացվել 28տ. «Սուպերէլիտա» սերմանյութ և 22հա «Սուպերէլիտա» ցանքից ստացվել մոտ 60տ. «էլիտա» սերմանյութ:

Գյուղփոխօգնության բանկի կողմից գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին հատկացվել է 654 մլն. դրամի գյուղատնտեսական վարկեր:

Մարզում առկա վեց ջրօգտագործող ընկերությունների կողմից ոռոգվել է 1941 հա ցանքատարածություն, մատակարարվել 7.1 հազ.խոր.մ. ջուր, հավաքագրվել՝ 49679 հազ. դրամ վարձավճար, կամ վարձավճարների գանձումը կազմել է 79%, անցած տարվա համեմատությամբ ապահովել 15% աճ:

Գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին հատկացվել է 4 հատ փոքրածավալ հացահատիկային կոմբայն և 4 կոմպլեկտ անիվավոր տրակտոր:

Մարզում գործող 35 հանքավայրերից շահագործվում է 17-ը, որից 5-ը՝ մետաղական, 12-ը՝ ոչ մետաղական, որոնք ունեն հողհատկացման և ընդերքի օգտագործման համապատասխան փաստաթղթեր:

Ստուգումներ և ուսումնասիրություններ են իրականացվել 69 բնապահպանական օբյեկտներում, 67 անձի նկատմամբ կազմվել է 2.6 մլն. դրամ գումարի վարչական տուգանք:

Հողաշինության և հողօգտագործման բնագավառ



Մարզի 46.9 հազ. հա վարելահողերից 2006թ. գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող տնտեսությունների կողմից օգտագործվել է 40.0 հազ.հա /85.3 %/:

Համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության հողերից 2006թ. օգտագործման համար հողօգտագործողներին վարձակալությամբ հատկացվել է վարելահողերի 62.4%, կամ 7300 հա, բազմանյա տնկարկների 71.4%, կամ 150 հա, խոտհարքների 27.2%, կամ 680 հա, արոտավայրերի 12.9%,

կամ 10800 հա: 2005թ. համեմատությամբ վարձակալությամբ տրված հողերը ավելացել են 1500 հա-ով:

2006թ. համայնքների տեղական բյուջեներով նախատեսված 213.3 մլն. դրամ /ներառյալ անցած տարիների ապառքներ/ վարձավճարից զանձումները կազմել են 110.1 մլն. դրամ կամ 51.6% /2005թ. 84.1 մլն. դրամ կամ 50.5%-ի դիմաց/:

Մարզի թվով 16 համայնքներում մարզպետարանի կողմից իրականացվել է հողային օրենսդրության կատարման ուսումնասիրություններ և համայնքների ղեկավարներին առկա թերությունները վերացնելու նպատակով տրվել համապատասխան ցուցումներ:

Համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող, պետական պահուստային ֆոնդի գյուղօգտագործելի հողատեսքերից գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով վարձակալական հիմունքներով 107 սուբյեկտներին 3-10 տարի ժամկետներով հատկացվել է 7700 հա /10.5%/, որի օգտագործման դիմաց տարեկան հաշվարկվել է 8.6 մլն. դրամ վարձավճար: 2006թ-ին 2005թ-ի համեմատ վարձակալությամբ ավել է հատկացվել 1840 հա հողամաս:

Համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող հողերից գյուղատնտեսական նպատակներով դեռևս հնարավոր չէ օգտագործել /սահմանակից է Նախիջևանին/ շուրջ 12.8 հազ. հա արոտավայր:

2007թ-ի հունվարի 1-ի դրությամբ հողօգտագործող սուբյեկտներին գույքային իրավունքների առաջին պետական գրանցման շրջանակներում անվճար հատկացվել է շուրջ 97 հազար միավոր հողամասերի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

Մարզի 10 համայնքի վարչական տարածքներում ականապատված է մնում 530.0 հա հողատարածք, որից 42 հա՝ մասնավորեցված:

«Վ կառավարության որոշումներով մարզի համայնքների վարչական տարածքների պետական սեփականության 167.0 հազար հա հողատարածք, այդ թվում 160.0 հազար հա-ն գյուղատնտեսական նշանակության սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել են համայնքներին:

«Վ կառավարության որոշումներով հաստատվել են մարզի բոլոր համայնքների վարչական սահմանների նկարագրերը:

Մարզի 68 համայնքներ ունեն հաստատված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ:

Առողջապահության բնագավառ



Մարզում գործում են մարզային ենթակայության 4 հիվանդանոց, 3 տարածքային պոլիկլինիկա, 2 բժշկական կենտրոն, 2 մասնագիտացված դիսպանսեր, 2 գյուղական առողջության կենտրոն, 2 գյուղական բժշկական ամբուլատորիա, 1 մարզային արյան փոխներարկման կայան: Պոլիկլինիկաներին, առողջության կենտրոններին և գյուղական բժշկական ամբուլատորիաներին կից, գյուղական համայնքներում գործում են 101 բուժական կետեր, որոնց միջոցով կազմակերպվել է բնակչության բժշկական օգնության և սպասարկման աշխատանքները:

Մարզային ենթակայության տակ առողջապահական համակարգում աշխատում են 1402 մարդ, որից 304 բժիշկ, 736 միջին և կրտսեր բուժաշխատող:

Բուժհաստատությունների կողմից սպասարկվող 10000 բնակչի սպասարկում է 20 բժիշկ, 48 միջին բուժաշխատող:

Ստացիոնար բժշկական հաստատություններում ծավալված է 695 մահճակալ:

Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջապահական համակարգի ֆինանսավորումը իրականացվել է 100 % -ով:

2006թ. նախահաշվով նախատեսված 48.5 մլն. դրամ վճարովի հիմունքներով ծառայություններից մուտքագրվել է 71.1 մլն. դրամ (2005թ-ին 70.0 մլն դրամ): Այլ ֆինանսական աղբյուրներից մուտքագրվել է 60.0 մլն.դրամ (2005 թվականին` 34.8 մլն.դրամ):

Մարզային ենթակայության բուժհաստատությունները 2006թ-ին հագեցվել են 178.1 մլն.դրամի նոր բուժասրբավորումներով, գործիքներով և պարագաներով (2005թ.-ին 84.5 մլն.դրամ):

Մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական, դիսպանսերային բուժօգնություն իրականացնող բուժհաստատությունների միջոցով անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղորայք ձեռքբերելու իրավունք ունեցող անձանց հատկացվել է 42.6 մլն.դրամ գումարի դեղորայք: Մարդասիրական օգնությամբ ստացվել է 13.3 մլն.դրամի դեղորայք:

Մարզի բուժհաստատություններում իրականացվել են 57.9 մլն. դրամի շինարարական- վերանորոգման աշխատանքներ:

2006թ ընթացքում պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցներում և դիսպանսերներում ստացիոնար բուժում է ստացել 7592 հիվանդ (2005թ-ին` 6922):

Պոլիկլինիկաներում և ամբուլատորիաներում հիվանդների հաճախումների թիվը կազմել է 428197 (2005 թ-ին` 36068):

Դիսպանսեր հսկողության տակ գտնվում է 22875 մարդ,

10 հազար բնակչի հաշվով ծնելիության ցուցանիշը կազմում է 10.8 (2005թ-ին- 10.7), մահացության ցուցանիշը 8.7 (2005թ-ին- 7.9): Բնական աճը` 2.1:

Մարզի բնակչությանն անվճար ընդունելություններ են կազմակերպվել «Երեբունի», «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կետրոնների, «Արաբկիր» մանկական կենտրոնի, ուռուցքաբանության գիտահետազոտական ինստիտուտի առաջատար մասնագետների կողմից:

«Հայկական ակնաբուժական նախագիծ» բարեգործական հիմնադրամը 2006թ-ի մարզում իրականացրել է 60.3 մլն, «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպությունը` 2006 թ-ին իրականացվել է 42.3 մլն դրամի ծառայություններ:

Սոցալապես անապահով և առանձին խմբերում չընդգրկված 74 քաղաքացիներ մարզպետի միջնորդագրով անվճար հիվանդանոցային բուժօգնություն են ստացել մայրաքաղաքի և մարզային ենթակայության բուժհաստատություններում: 12 քաղաքացիներ մարզպետի միջնորդագրով անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում անցել են հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ: 25 քաղաքացիների տրվել է առողջարանային վերականգնողական բուժման անվճար ուղեգրեր:



Սոցիալական ապահովության բնագավառ

Մարզպետարանի կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցներ կարիքավոր ընտանիքների վերահաշվառման գործընթացը ապահովելու ուղղությամբ, վերահաշվառվել է 8890 ընտանիք: Ուշադրության կենտրոնում են եղել աղքատության նպաստի համակարգում ընդգրկված ընտանիքների ցուցակների ճշգրտման, հատկացված միջոցների առավել հասցեական տրամադրման աշխատանքները:

Մարզի 5628 ընտանիք /2005թ-ին 5735 ընտանիք/ ընդգրկվել է աղքատության ընտանեկան նպաստի համակարգում: Ընտանիքին տրվող միջին ամսական նպաստի չափը կազմել է 14432 դրամ, ամսական միանվագ դրամական օգնություն է նշանակվել 368 ընտանիքի /2005թ-ին` 1281 ընտանիք/:

Հաշվետու ժամանակահատվածում նպաստները և կենսաթոշակները վճարվել են ժամանակին: Կենսաթոշակառուների թիվը կազմում է 26478 մարդ. միջին ամսական թոշակը` 12000 դրամ (2005թ-ին` 10700 դրամ):

Մարզում գրանցված է 11388 /2005թ-ին` 12542/ աշխատանք փնտրող քաղաքացի, որից 9829-ը /2005թ-ին` 9786/ ունի գործազուրկի կարգավիճակ:

Որոշակի աշխատանքներ են իրականացվել հաշմանդամների սոցիալական վիճակի բարելավման ուղղությամբ. 57 հաշմանդամների հատկացվել են պրոթեզներ, լուծվել է 75 հաշմանդամների հենակների և ձեռնափայտերի ձեռք բերման հարցը, իսկ 60 հաշմանդամներ և ծերեր ստացել են լսողական ապարատներ: Նշված պարագաները հաշմանդամները ստացել են տեղում, առանց երևան մեկնելու:

Տարվա ընթացքում 381 ավանդատուների վճարվել է 47358 հազ. դրամ:

2006թ. «Ընթացիկ ներքին այլ տրանսֆերտային վճարներ» հոդվածով Սյունիքի մարզպետարանին հատկացված 10 մլն. դրամ միջոցներից 305 քաղաքացիների հատկացվել է դրամական օգնություն:

«Առաքելություն Հայաստան» հասարակական բարեգործական կազմակերպության ֆինանսավորմամբ մարզում գործում է 4 բարեգործական ճաշարան, որտեղ 720 հոգի օրական մեկ անգամ ստանում են տաք սնունդ: Արժվանիկ գյուղում գտնվող «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դինսպանսեր» ՓԲԸ նախկին շենքը հատկացվել է «Առաքելություն Հայաստան» հասարակական բարեգործական կազմակերպությանը, որը ստեղծել է տարեցների սպասակման կենտրոն, որտեղ խնամվում են 10 շահառուներ:

«Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրերի համար մարզին հատկացված 85600 հազ. դրամից իրացվել է 79482 հազ դրամը:

Մարզի 9 փախստական ընտանիքներ բնակարանների գնման վկայագրերի միջոցով ձեռք են բերել բնակարան:

Գորիս քաղաքում շահագործման է հանձնվել ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի, Շվեյցարական զարգացման գործակալության և ՀՀ Սյունիքի մարզպետարանի համաֆինանսավորմամբ շենքը, որի արդյունքում բնակարանով ապահովվել են Գորիս քաղաքի ժամանակավոր կացարաններում բնակվող 40 փախստական ընտանիքներ:

Երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառ

Մարզի 95 համայանքում ստեղծվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ:

Խնամակալության և հոգաբարձության մարմիններից ստացված տեղեկատվության հիման վրա կազմվել է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տարածքային հաշվառման մատյան և շտեմարան, իրականացվել՝ կենտրոնացված հաշվառմանը ուղղված գործառույթներ:

Մարզում հաշվառված է երկկողմանի ծնողագուրկ 54 երեխաներ:

Կրթության առանձնահատուկ պայամանների կարիք ունեցող 65 երեխաների վերաբերյալ տրվել է եզրակացություն՝ մարզի 4 հատուկ կրթական հաստատություններում սովորելու համար:

Մարզի 3 հատուկ դպրոցներում կատարվել է ուսումնասիրություններ դժվար իրավիճակում գտնվող երեխաների հայտնաբերման և նրանց օժանդակման նպատակով:

Ոստիկանության անչափահասների գործերով զբաղվող ծառայությունների հետ համատեղ կազմվել է մուրացիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների տվյալների շտեմարան: Մարզում հաշվառված է մեկական իրավախախտ և մուրացիկ, հանցագործություն կատարած 20 երեխաներ: Միջոցներ է ձեռնարկվել մուրացկանությամբ, թափառաշրջիկությամբ հակված, բայց չհաշվառված երեխաների հաշվառմամ, նրանց հետ անհրաժեշտ աշխատանքներ կազմակերպելու ուղղությամբ:

Կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման նպատակով՝ մարզպետարանում ստեղծվել է մշտապես գործող աշխատանքային խումբ և առկա հիմնախնդիրների լուծման համար կազմվել միջոցառումների ծրագիր:

Կրթության բնագավառ



2006թ. ընթացքում մարզպետը անհրաժեշտ աշխատանքներ է տարել մարզային ենթակայության պետական ուսումնական հաստատությունների գործունեության կազմակերպման, պետական հանրակրթական ծրագրերի իրագործման ապահովման, ուսումնական հաստատությունների գործունեության վերահսկողության իրականացման ուղղությամբ: Կրթության բնագավառում ապահովվել է ՀՀ կառավարության քաղաքականության միասնականությանն ու կրթության որակի բարելավմանն ուղղված գործառույթների իրականացումը, պետական ուսումնական հաստատություններին օգտագործման իրավունքով հանձնված շենքերի կառուցումը, շահագործումը և պահպանումը, հանրակրթության իրականացման գործընթացում պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և ուսումնական հաստատությունների հարաբերությունների կանոնակարգումը:

2006 թ. սեպտեմբերի դրությամբ մարզային ենթակայության 117 հանրակրթական և 4 հատուկ դպրոցներում կոմպլեկտավորվել է 1279 դասարան՝ 19865 սովորողով. դասարանների միջին խտությունը կազմել է 15.53 աշակերտ: Հանրապետական ենթակայության 2 հանրակրթական դպրոցներում և 1 հատուկ

կրթահամալիրում կոմպլեկտավորվել է 44 դասարան՝ 913 աշակերտով: Ընդհանուր դասարանների միջին խտությունը հանրապետական ենթակայության ուսումնական հաստատությունների հետ միասին կազմել է 15.7 աշակերտ, ընդ որում աշակերտ թվով ֆինանսավորվող դպրոցներում՝ այդ թիվը կազմել է 24.6 աշակերտ: Անկախ աշակերտ թվով ֆինանսավորվող դպրոցներում դասարանների միջին խտությունը կազմել է 9.2 աշակերտ:

Մարզային ենթակայության 121 դպրոցներում աշխատում է 3708 մարդ, որից՝ 2556-ը մանկավարժներ՝ բարձրագույն կրթությամբ՝ 1854-ը կամ 72.6%-ը մանկավարժական բարձրագույն կրթությամբ՝ 1644-ը կամ 64.3%-ը: Միջնակարգ մասնագիտական կրթություն ունեն 578 աշխատող:

Մարզի 94 դպրոցներ ունեն համակարգիչներ, 32-ում գործում են համակարգչային դասարաններ, իսկ 29 դպրոցներ ունեն ինտերնետային կապ:

Դպրոցներից 24-ում գործում է լոկալ ջեռուցման ցանց:

Մարզի 58 դպրոցներում «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի շրջանակներում ստեղծվել են դպրոցական համակարգչային ուսումնական կենտրոններ /ԴՀՈԻԿ/-ներ, որոնք հագեցված են 246 համակարգիչներով և 233 համակարգչային այլ սարքավորումներով: Այս աշխատանքները կկրեն շարունակական բնույթ:

Մարզի սահմանամերձ գյուղերում աշխատում են զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով գործուղված 53 ուսուցիչներ, որոնցից 30-ը ունեն մանկավարժական մասնագիտական կրթություն:

2005-2006 ուս.տարում 10-րդ դասարանի 2019 շրջանավարտից 12-ը ստացել է գերազանցության մեդալ, իսկ 918-ը՝ ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Մարզի դպրոցականներից 76-ը մասնակցել է առարկայական հանրապետական օլիմպիադաների, որոնցից 7-ը ստացել է դիպլոմ, իսկ 20-ը՝ գովասանագիր: Մարզի տարածքում պարտադիր հիմնական կրթությունից դուրս մնացած երեխաներ չկան:

Մարզի 24 շրջանավարտներ 2006թ. ընդունվել և սովորում են Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և արտասահմանյան տարբեր երկրների բարձրագույն ռազմական ինստիտուտներում, ակադեմիաներում և ուսումնարաններում:

Մարզում գործում են 3 պետական, 4 ոչ պետական հավատարմագրված բուհեր, 8 քոլեջ, հանրապետական ենթակայության 1 վարժարան և հենակետային 2 վարժարան:

2006թ. ստացվել է 32714 կտոր դասագիրք, որից վարձակալական համակարգով՝ 21036 կտոր: 1-3-րդ դասարանների աշակերտները ստացել են 11678 կտոր անվճար դասագիրք: Ընդհանուր առմամբ աշակերտները ապահովված են դասագրքերով, իսկ սոցիալապես անապահով, բազմազավակ, ծնողազուրկ և զոհված ազատամարտիկների ընտանիքների երեխաները դասագրքերը ստացել են անվճար: Դասագրքերի վարձավճարների հավաքագրումը 2007 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 38մլն. 625 հազ. դրամ, կամ 100 %:

2006 թ. մարզի 33 դպրոցներում իրականացվել են 968 մլն. 790 հազ. դրամի համաշինարարական աշխատանքներ:

2006թ կազմակերպված դասընթացներում վերապատրաստվել են 1585 մանկավարժներ, որից 79-ը՝ դպրոցի տնօրեններ:

Վերապատրաստման ուսումնական ծրագրերը նպատակաուղղվել են հանրակրթության պետական կրթակարգի, սովորողների գնահատման

հայեցակարգի, միջնակարգ կրթության պետական չափորոշիչի, 12-ամյա ուսուցման հենքային ուսումնական պլանների, ծրագրերի ուսումնասիրության ներդրմանը, 6 տարեկան երեխաների ուսուցման իրականացմանը, նոր բարեփոխումներով ներկայացվող պահանջների կատարմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզային ենթակայության 79 դպրոցում փոփոխվել է դպրոցական խորհուրդների կազմը, 41 դպրոցում ընթացքի մեջ է դպրոցական խորհուրդների կազմի ձևավորումը: Մրցութային կարգով ընտրվել է 4 դպրոցի տնօրեն:

Համընդհանուր ուսումնասիրություն է կատարվել մարզի 23 դպրոցում, որոնց արդյունքում վարչական և կարգապահական պատասխանատվության է ենթարկվել 5 տնօրեն:

Մշակույթի և սպորտի բնագավառ



Անհրաժեշտ աշխատանքներ են իրականացվել մարզային ենթակայության մշակութային և սպորտային հաստատությունների աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: Մարզպետարանի գործունեությունը նպատակաուղղված է եղել մարզի մշակութային, մարզական և հոգևոր կյանքի զարգացմանն ու բարելավմանը, երիտասարդության հետ տարվող աշխատանքների աջակցմանն ու ակտիվացմանը:

Մարզում գործում են 2 դրամատիկական թատրոն, Ակսել Բակունցի անվան և 3 երկրագիտական թանգարաններ, 155 գրադարան, 17 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, 5 մշակութային կենտրոն, 126 մշակույթի տուն և ակումբ, 7 մարզադպրոց, 6 մարզադաշտ և այլ մարզական կառույցներ ու մշակութային օջախներ:

Տարվա ընթացքում պատշաճ մակարդակով նշվել են ազգային, պետական տոները, հոբելյանները և հիշարժան իրադարձություններ:

2006թ. մայիսի 8-ին և 9-ին մարզկենտրոնում, ինչպես նաև մարզի բոլոր համայնքներում կազմակերպվել են «Մեր սուրը փառքով դրեցինք պատյան» խորագրով զանգվածային միջոցառումներ՝ նվիրված Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 61-ամյակին և Շուշիի ազատագրման 14-րդ տարեդարձին:

Երիտասարդության հետ տարվող աշխատանքները ակտիվացնելու նպատակով մարզում անց են կացվել մասսայական երիտասարդական միջոցառումներ, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի հետ համատեղ՝ Եվրոպական ֆիլմերի փառատոն և այլ բազմաբնույթ միջոցառումներ:

Ջանգվածային միջոցառումներ են անցկացվել՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 15-ամյակին, Հայոց ցեղասպանության 91-րդ տարելիցին:

2006թ. մարզում անց են կացվել ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք», «Լավագույն մարզական համայնք», «Լավագույն մարզական բակ» ստուգատեսները:

2006թ. մարզում բացվել է երիտասարդական միջոցառումների կազմակերպման մարզային կենտրոնը:

Անհրաժեշտ աշխատանքներ է տարել պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման ուղղությամբ: Պետական բյուջեի

միջոցներով զգալի աշխատանքներ է իրականացվել Վահանավանքի վանական համալիրի և Հալիծորի ամրոցի վերանորոգման ուղղությամբ:

Պետական բյուջեի միջոցներով և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ վերանորոգվել են առանձին գյուղական համայնքների ակունք-գրադարանները, սպորտ դահլիճները, ստեղծվել խաղահրապարակներ՝ իրականացվել է 78.2 մլն. դրամի չափով:

Առևտրի, հասարակական սննդի եւ սպասարկման բնագավառ

2006 թվականին նախնական տվյալներով գրանցվել է սպառողական շուկայի ծավալի 23.2% աճ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով կազմելով 13600.0 մլն. դրամ:

Մարզում մանրածախ առևտրով զբաղվող գործող օբյեկտների քանակը կազմում է 434 միավոր, (Կապանում՝ 168, Գորիսում՝ 85, Սիսիանում՝ 103, Մեղրիում՝ 78):

Գործող խանութների 53.8 %-ը մասնագիտացված են պարենային ապրանքների, 35.6%-ը՝ ոչ պարենային և 10.6%-ը՝ խառը ապրանքների վաճառքով:

Բնակչության մեկ շնչի հաշվով մանրածախ առևտրի շրջանառությունը կազմում է 49215.0 դրամ (հանրապետության միջին ցուցանիշից 5 անգամ պակաս):

Մարզում մատուցված վճարովի ծառայությունների ծավալը 2006 թվականին, ընթացիկ գներով կազմել է 4285.0 մլն.դրամ, ինչը 32.1%-ով ավել է նախորդ տարվա համեմատ:

Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը 2006թ. ինը ամսվա փաստացի տվյալներով խոշոր և միջին կազմակերպություններում կազմել է 81.1հազ. դրամ, ընդ որում ըստ տնտեսության ճյուղերի ամենաբարձր աշխատավարձը արձանագրվել է արդյունաբերության ոլորտում՝ 137.1հազ. դրամ, շինարարությունում՝ 85.9 հազ. դրամ, կառավարման ապարատում՝ 75.0 հազ. դրամ, տրանսպորտ՝ 49.7 հազ. դրամ, կապ՝ 60.6 հազ. դրամ, կրթության ոլորտում՝ 41.9 հազ. դրամ: Ամենացածրը վարձատրվել են առողջապահական և սոցիալական ծառայություններ մատուցողները՝ 30.0 հազ. դրամ:

2006 թվականի հունվար-սեպտեմբերին սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կազմել է 100.3%, իսկ 2006թ. սեպտեմբերին 2005թ. դեկտեմբերի համեմատ տարածաշրջանի սպառողական շուկայում արձանագրվել է 4.9% գնաճ, ինչը մեծապես պայմանավորված է առանձին պարենային ապրանքատեսակների գների սեզոնային փոփոխություններով (հանրապետությունում այն կազմում է 4.3%):

Արտաքին կապեր

2006 թվականի ընթացքում ընդլայնվել և խորացվել է մարզի և միջազգային կառույցների համագործակցությունը:

Մարզպետարանի կողմից 2006թ. նոյեմբեր ամսին հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի նախագահին ներկայացվել է տեղեկատվություն փոխըմբռնման հուշագրի տարածաշրջանային համագործակցությանը վերաբերող կետերի կատարման ընթացքի վերաբերյալ, ինչպես նաև հայ-իրանական համագործակցության զարգացման վերաբերյալ մարզի կտրվածքով առաջարկություններ:

2006թ. հունիսին, մարզկենտրոնում բացվեց ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի Սյունիքի մարզի ներկայացուցչությունը, որի հիմնական նպատակն է աջակցել մարզում տնտեսական և բնապահպանական ծրագրերի նախաձեռնմանն ու իրականացմանը:

2006թ. նոյեմբերին ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ղեկավարության և արտասահմանյան փորձագետների մասնակցությամբ՝ քննարկվեց Սյունիքի մարզում «բիզնես-ինկուբատոր»-ի հիմնադրման ծրագիրը:

Սյունիքի մարզի Քաջարան և Մինսկի մարզի Ժողինո քաղաքների միջև կնքվեց համագործակցության, իսկ «Բելչին» կազմակերպության և «ԶՊՄԿ», «ԱՊՄԿ» ՓԲ ընկերությունների միջև ստորագրվեցին ավտոդոլերի մատակարարման պայմանագրեր:

Տեղեկատվության բնագավառ

Մարզպետարանի գործունեության մեջ որոշակի տեղ է զբաղեցրել հրապարակայնության ապահովումը որպես տարածքային կառավարման սկզբունք: Դրան նպաստել են նաև մարզային ու համայնքային 14 լրատվամիջոցները, որոնց կայացման, առաջացած դժվարությունների հաղթահարման գործում ցույց է տրվել անհրաժեշտ աջակցություն:

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերություններ

Մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների համագործակցությունն ապահովելու նպատակով, մարզպետի կողմից 2006թ. անց է կացվել տարածաշրջանային 21 խորհրդակցություն՝ քննարկվել և լուծում է ստացել մոտ 160 հարց:

Լսվել և քննարկվել են համայնքների ղեկավարների առաջարկություններն ու դիտողությունները մարզպետարանի, մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեության, համայնքներում իրականացվող ծրագրերի վերաբերյալ:

2006 թվականին հրավիրվել է մարզխորհրդի 4 նիստ, որոնցում քննարկվել և լսվել են մարզպետի 2005թ. գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական

վիճակի, մարզպետի 2006թ. աշխատանքային ծրագրի, սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի, տեղական ինքնակառավարման մարմիններում համայնքային ծառայության ներդրման մասին և այլ հարցեր:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն կազմվել է մարզի համայնքներում 2006թ. վարչական վերահսկողության իրականացման աշխատանքային ծրագիրը:

Ուսումնասիրվել է մարզի քաղաքային և գյուղական համայնքներից ստացված ավագանիների նիստերում ընդունված 1984 որոշում և ՀՀ օրենսդրության համապատասխանության մասին կազմվել է 533 եզրակացություն:

2006թ. մարզպետի կողմից օրենսդրության կատարման ապահովման ուղղությամբ 10 հայց է ներկայացվել ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան և այն ամբողջությամբ բավարարվել է:

Մարզպետը ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության շրջանակներում, 2006թ. ապահովել է մարզի 13 համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման աշխատանքները:

ՀՀ կառավարության 2005թ. հուլիսի 14-ի «Հայաստանի Հանրապետությունում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» N1231-Ն որոշման կատարման ապահովման նպատակով մարզի 103 գյուղական համայնքներում /129 բնակավայր/ սահմանված կարգով իրականացվել են անշարժ գույքի համարակալման ու հասցեավորման աշխատանքները:

Կանոնակարգված աշխատանքներ է տարվել մարզի համայնքներում «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի ներդրման ուղղությամբ:

Մարզպետարանը, սահմանված կարգով, իր իրավասությունների շրջանակներում լուծում է տվել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բարձրացված հարցերին, համապատասխան առաջարկություններ և միջնորդություններ ներկայացրել ՀՀ կառավարություն և նախարարություններ:

Մարզպետի և մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների այցելությունները համայնքներ կրել են պարբերական բնույթ:

Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությանն առնչվող հարցեր

Մարզպետը, որպես մարզային զորակոչային հանձնաժողովի նախագահ, ձեռնարկել է անհրաժեշտ միջոցներ, որի շնորհիվ կատարվել են 2006թ. տարեկան զորակոչային պլանները և նախատեսված 1016-ի փոխարեն զորակոչվել է 1046 զինակոչիկ, կամ առաջադրանքը կատարվել է 103%-ով:

Մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2006թ.վականի պլանի համաձայն, անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել նաև քաղաքացիական պաշտպանության համակարգի պատրաստակալության բարձրացման ուղղությամբ:

Մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2006 թվականի հիմնական միջոցառումների պլանի համաձայն մարտի13-14-ը և օգոստոսի 15-16-ը կազմակերպվել և անց է կացվել շտաբային, հոկտեմբերի 10-14-ը հրամանատարաշտաբային ուսումնավարժանքներ, որի արդյունքները ՀՀ

պաշտպանության նախարարության գլխավոր շտաբի կողմից գնահատվել են դրական:

2006թ. մարզի տարածքում արձանագրվել է հանցագործության 324 դեպք, նախորդ տարվա 314-ի դիմաց: Բացահայտումը կազմել է 88%, նախորդ տարվա 90%-ի դիմաց:

Արձանագրվել է թմրամոլության և թմրանյութերի ապօրինի շրջանառության 43 դեպք, նախորդ տարվա 63-ի դիմաց, բացահայտումը կազմել է 94.9 %, նախորդ տարվա 98.3%-ի դիմաց: Արձանագրվել է գենքի, հրազենի և ռազմամթերքի ապօրինի շրջանառության 4 դեպք, նախորդ տարվա 10-ի դիմաց, բացահայտումը կազմել է 100 %:

Հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերվել է բնապահպանության օրենսդրության խախտման 67 դեպք, վարչական տույժի է ենթարկվել 67 անձ, իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ սահմանվել է 35.4 մլն դրամի տուգանք:

Ղատական ակտերի հարկադիր կատարման բոլոր կատարողական վարույթներով փաստացի բռնագանձված գումարը կազմել է 132.7 մլն. դրամ /կարճվել և ավարտվել է 2522 կատարողական վարույթ/:

Մարզում իրականացվել է 1222 օտարման գործարք, որից 277-ը՝ հողի օտարման:

2006թ. թվականին բնակչության բնական հավելաճը կազմել է 333 մարդ:

Գրանցված ամուսնությունների թիվը կազմել է 685, իսկ ամուսնալուծությունների թիվը՝ 100:

2006 թվականին մարզ եկողների (հաշվառվածների) թիվը կազմել է 256 մարդ (որից ներմարզային միգրացիա՝ 64 մարդ), իսկ մեկնողներինը (հաշվառումից դուրս եկածներինը) 713 մարդ (որից ներմարզային միգրացիա՝ 27 մարդ), նախորդ տարվա համեմատ համապատասխանաբար 316 և 670 մարդու դիմաց:

Եզրափակիչ դրույթներ, առաջարկություններ

Տարածքային կառավարման մարմնի՝ մարզպետի գործունեության արդյունավետության բարձրացումը պայմանավորված է լուծում պահանջող մի շարք հիմնախնդիրներով, որոնք են՝

1. Տարածքային կառավարման մարմնի գործունեությունը օրենսդրորեն կանոնակարգող «Տարածքային կառավարման մասին» օրենքի ընդունում՝ ապակենտրոնացնելով պետական կառավարման մարմինների որոշ լիազորությունները և այն վերապահելով տարածքային կառավարման մարմնին:
2. ՀՀ կառավարության որոշման ընդունում ՀՀ Սյունիքի մարզի զարգացման եռամյա ծրագրի վերաբերյալ՝ կապված մարզի հիմնախնդիրների /գործազրկության մակարդակի իջեցման, բնակչության եկամուտների ավելացման, պատերազմական գործողությունների հետևանքների վերացման, սահմանամերձ և լեռնային համայնքների անրապնդման և զարգացման, ներդրումային դաշտի բարելավման/ լուծման հետ:
3. Կցվում է մարզի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանն ուղղված առաջարկությունները:

ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ_ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**1. ՀՀ կառավարություն**

- «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ տարածաշրջանների զարգացման համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունում:
- Հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրների և ստուգումների իրականացման կարգերի հստակեցման նպատակով «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքի ընդունում
- «Ունեւորությունների և ռազմական գործողությունների հետևանքով անօթևան մնացած քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավում» ծրագրի հաջորդող փուլերի իրականացում
- «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացվելիք հսկողության իրականացման կանոնակարգում:

2. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն

- Տեղական հումքի վերամշակման, սննդի արտադրության ձեռնարկությունների վերագործարկման նպատակով մարզի տարածքում երկարաժամկետ ներդրումների և վարկավորման ծրագրերի իրականացման ապահովում

3. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն

- Մ-2 Երևան-Մեղրի մայրուղու ՊԿ 168-ՊԿ172, ՊԿ214-ՊԿ217 /Սիսիանի տարածք/ և ՊԿ227-ՊԿ230+25 /Գորիսի տարածք/ հատվածներում ձյունապաշտպան արգելապատնեշների տեղադրում՝ երթևեկության անվտանգության և անցանելիության ապահովման նպատակով
- Մ-2 մայրուղու Սիսիան-Գորիս կմ 203+500 բարձր վտանգավորություն ունեցող ճանապարհահատվածը շրջանցող նոր ճանապարհահատվածի կառուցում:

4. ՀՀ քաղաքաշինության նախարարություն

- Մարզի սողանքային տարածքներում գտնվող վթարային անհատական տների բնակիչների անվտանգության ապահովման նպատակով բնակարանային պայմանների բարելավում, հակասողանքային միջոցառումների իրականացում.

ՀՀ տարածքային կառավարման նախարարություն

- Մարզի քաղաքային համայնքներում /Կապան, Գորիս, Մեղրի, Ագարակ/ խնելու ջրատարների և ջրամատակարարման ներքին ցանցերի հիմնանորոգում և կառուցում

5. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
 - Շիկահողի արգելոցի տարածքում տնկարկային տնտեսության ստեղծում
 - Տոհմային նոր տնտեսությունների ստեղծում Կապանի և Գորիսի տարածաշրջաններում
6. ՀՀ կրթության և գիտության նախարարություն
 - Հանրակրթական դպրոցների /առաջնահերթության կարգով Կապանի թիվ 9, 10, թիվ 2 հատուկ, Քաջարանի թիվ 5, Գորիսի թիվ 2, 6, Տեղի թիվ 1, Տաթևի, Շուռնուխի, Սիսիանի թիվ 1, 2, Բռնակոթի, Աշոտավանի և Շամբի/վերանորոգում, նյութատեխնիկական բազայի /համակարգչային տեխնիկա, լաբորատոր գույք, աշակերտական սեղան-նստարաններ, սպորտային գույք/ հարստացում:
 - Մարզի Բարձրավան, Եղեգ, Արավուս, Բնունիս, Նոնաձոր համայնքներում դպրոցական շենքերի կառուցում
7. ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն
 - Մարզի մշակութային օջախների վերանորոգում, գույքային բազայի նորացում
8. ՀՀ առողջապահության նախարարություն
 - Երիկամների պաթալոգիայով հիվանդների բուժումը տեղում կազմակերպելու նպատակով մարզկենտրոնում հեմոդիալիզի կենտրոնի ստեղծում:
 - Օնկոլոգիական հիվանդների մասնագիտացված էտապային (հետվիրահատական շրջանում քիմիոթերապիա և ճառագայթային) բուժումը տեղում կազմակերպելու համար ստեղծել մարզային օնկոլոգիական դիսպանսեր:
9. ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն:
 - Կյանքի վերջին շրջանում ծանր հիվանդների խնամքը կազմակերպելու համար ստեղծել մարզային «Խնամքի տուն» (հոսպիս):